

ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԻԼ 23

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелк».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Ուրաղութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՐԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Մենք ստացանք Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան մանրամասն հաշիւները, որոնք վերաբերում են անցեալ 1901 թ. աշունին: Կարգադրող այդ հաշիւները մեծ հետաքրքրութեամբ եւ հաճութեամբ.— ամէն ինչ պարզ է այդտեղ եւ մանրամասն բացատրված, այնպէս որ ընթերցողը միանգամայն լիակատար հակացողութիւն է կազմում ընկերութեան գործունէութեան մասին: Այդ օրինակները հաշիւները մենք առաջարկում ենք մեր բոլոր հիմնարկութիւններին, որոնք չոր ու ցամաք լինան: Եւ անհրաժեշտ պաշտօնական անհատական լիակատարութիւններ տալով, վերջացրած են համարում իրանց պարտքը: Մի համարակազմ հիմնարկութիւն կարող է հասարակութեան մէջ լայն ժողովրդականութիւն ստանալ այն դէպքում միայն, երբ բաց է առնուի իր գործունէութեան բոլոր մանրամասնութիւնները, երբ իսկական հաշիւ է տալիս հասարակութեան: Այս կողմից մենք չորհաւորում ենք Մարդասիրական ընկերութեան Վարչութիւնը, որ կարողացել է իր հաշիւներով ընկերութեան մէջ հասնել մեզանում անօրինակ մի կատարելութեան:

Ունենալով ձեռքի տակ այդպիսի հաշիւներ, մենք ունենք մեր առջեւ ընկերութեան մի տարվայ գործունէութեան պարզ պատկերը: Այդ գործունէութիւնը վերին աստիճանի մշակութարարական տպագրութիւն թողնեց մեզ վրա: Կարող ենք առանց տատանվելու ասել, որ եթէ մեր ներկայ կենքում կարելի է գտնել փոքր ի շատ գեղեցիկ, փայլուն, յուսատու մի երեւոյթ, դա ամենից առաջ Բագուի Մարդասիրական ընկերութեան գործունէութիւնն է:

Մի ժամանակ կար, երբ այդ ընկերութիւնը անշարժացած էր փառանքի քարացման շրջանում: Իր մեծ գրադարանը տալիս էր շահով, այդ շահը կարգադրելու համար մի քանի որոշումներ էր անում ընդհանուր ժողովների մէջ, գլխավորապէս բաժանելով, մանր գումարներով, զարգացնելով եւ ուսանողներին եւ եթէ վերջինքը տարիների մի երկար շարք, կը տեսնենք, որ բացի այդ բարեգործութիւններից, մեծ իրաւունքներ ունի:

Տեսէք, այժմ ինչ են ասում զարմանալի գործիչները:

Նրանք պահանջում են, որ հին ընկերութեան գումարը յատկացվի ա. Լուսաւորիչ եկեղեցուն: Բ. ի. Արաճապետը ժողովից ստալ հաւատարմութիւն է մեզ, որ եթէ գումարը տրվի նոր ընկերութեան, նա... դատ պիտի սկսէ ընդդէմ նոր ընկերութեան:

Տ. ի. Քեհեկեանը, հին ընկերութեան վարչութեան անդամ, նոր կանոնադրութիւնը համակերպել գործ չէ ճանաչում եւ պահանջում է, որ փողերը տրվեն ա. Լուսաւորիչ եկեղեցուն:

Իսկ առաջ քանիցայն Ջալիֆեան՝ ձեռքը ստիճան դրած, վկայում է ժողովին, որ մեզանում կան ծխական զարգացներ, մենք պիտի հոգանք ծխական զարգացների ծախսը եւ պահանջում է, որ գումարը տրվի եկեղեցուն, որը կը հոգայ ծխական զարգացների մասին...

Վիճելը աւելորդ էր: Ուր հետ, ինչ օգուտ վիճել:

Հին ընկերութիւնը դադարեցրեց իր գործունէութիւնը եւ գումարը յատկացվեց ա. Լուսաւորիչ եկեղեցուն:

Գումարը յատկացվեց ա. Լուսաւորիչ եկեղեցուն:

Գեղեցիկ հրապարակի վրա, գեղեցիկ պարագով պատճա, գեղեցիկ պարագաների մէջ, հոյակապ բարձրանում է ա. Լուսաւորիչ եկեղեցին հարկւր տարուց աւելի վեց հայ գիւղերի գիւղացիները, մօտենալով Նախիջևանին, հեռուից տեսնում են ա. Լուսաւորիչ եկեղեցու գեղեցիկ գմբէթը եւ երկեղծութեամբ իրա-

Ընկերութիւնը կարողացել է մի փառաւոր փութիւն կառուցանել եւ մի գրադարան պահել:

Նոր կանոնադրութիւնը ընկերութեան առջեւ նոր պահանջներ դրեց: Այժմ նրան առաջարկվում էր մի բարեգործութիւն, որ անմիջապէս ժողովրդական անթիւ ցաւերի հետ էր չփոխում: Արեւատին հաց տալ, աղքատի կեանքը պահպանել այն սոսկալի պայմանների մէջ, ուր նա է ապրում, աղքատին սովորեցնել աշխատանքով ապրելու.— ահա վերակազմված ընկերութեան առջեւ դրած պայմանները: Բարեբաղդաբար, ընկերութեան զեկը անցաւ եռանդուն, գործելու յօժարով: Թիւն ունեցող մարդկանց ձեռքը, եւ կանոնադրութիւնը մեռած տոտ չը մնաց, իրական գործ դարձաւ: Եւ այսօր Մարդասիրական ընկերութիւնը, բացի սովորական բարեգործութիւնից, որ աղքատներին ոգործութիւն տալիս է, ունի երեք համակերպ, գեղեցիկ հիմնարկութիւններ: Նա շարունակում է պահպանել գրադարան-ընթերցարանը եւ բացել է. 1) Աշխատանքի տուն եւ 2) Ճաշարան: Բերենք մի քանի տեղեկութիւններ:

1901 թ. աշունին ընկերութեան վարչութիւնը ստացել է 1047 խնդրագիր՝ օգնութիւն տալու համար: Հետաքրքրական է թէ ինչ տեսակ կարիքներ են ստիպել կարօտեալներին օգնութեան դիմելու: Խնդրել են՝

Ամսական նպաստ.	217
Միամսակ նպաստ	240
Ճանապարհածախս հայրենիք վերադառնալու	216
Օժիտ տալու (հարսանիքի).	21
Բժշկվելու	107
Թաղման.	18
Աշխատութեան համար նիւթեր գնելու	56
Բնակարանի վարձ տալու	20
Ճաշ ստանալու.	66
Պաշտօն դառնելու	86
Վարչութիւնը տուել է 801 նպաստ 4722 ռուբլի 50 կոպեկ գումարով, միջին թուով միջտական նպաստի քանակութիւնը հասնում է 5 ռ. 94 կոպեկի ամսական: Բացի այդ բոլորից Զորահէքի եւ Զատիկի տօներին բաժանված է մօտ 1500 ռուբլի:	
Աշխատանքի տուէն: Բացվել է 1901 թ. ունեւի 2-ին: Այդ օրից մինչեւ 1902 թ. յուն-	

Աշխատանքի տուն: Բացվել է 1901 թ. յունիսի 2-ին: Այդ օրից մինչեւ 1902 թ. յունի-

զանքում են երեսները: Վեց հայ գիւղերի աղքատ գիւղացիները տեսնում են հոյակապ եկեղեցին եւ հարուստ քաղաքացիներին եւ ստոած սրտով վերադառնում են իրանց գիւղերը: Արատի, կեղտի մէջ են թաղված խեղճները: Զուհին ոչ բժիշկ, ոչ հիւանանոց, ոչ մանկաբարձուհի, ոչ գեղարան: Սիֆիլիսը խոր արմատներ է դրել: Օգնութիւն ոչ մի կողմից: Մեր զարմանալի գործիչները այդ բոլորը տեսնում են, գիտեն, հասկանում եւ սակայն գումարները յատկացնում են դարձեալ եկեղեցուն:

Մինչդեռ այժմ, երբ հին ընկերութեան մոլորի վրա ծնում է մի աւելի զօրեղ ընկերութիւն, որի գլխավոր նպատակներից միւր պիտի լինի նպաստել ոչ թէ միայն կուշտ նախիջևանացուն, այլ եւ քաղցած, գլխաւորը՝ թմրած գիւղացուն, հին ընկերութեան գումարը կարող էր մեծ օգուտ տալ, մանաւանդ գործունէութեան առաջին քայլերում: Բայց ինչ արած:

Զարմանալի գործիչները կարծում են, որ եկեղեցուց դուրս չը կայ հոգու փրկութիւն եւ փոխանակ գործ անելու՝ հոգիներ են փրկում: Եւ սուրբ Լուսաւորիչ եկեղեցու արտաքին փայլը ցոյց է տալիս մեր սրտերի ներքին աղքատութիւնը...

Մական թող չը վնասեն նոր ընկերութեան վարչութեան տաք անդամները: Ճշմարտութիւնը միշտ պիտի տանէ, յաղթէ...

Ի սրտէ ցանկանք շատ եւ շատ այդպիսի համակերպ գործեր եւ սակաւ, սակաւ, այդպիսի... զարմանալի գործիչներ...

Գր. Զալուշեան

Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Ի

վարձատ մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 21-ին: Թաղումը տեղի կունենայ իր հայրենի Օձուն (Ուղունյար) գիւղում: ամբիջը կը կատարվի ապրիլի 23-ին, երեկոյան ժամը 6 1/2-ին, իսկ յուղարկութիւնը կը սկսվի 24-ին, ցերեկվայ ժամը 12-ին, դէպի երկաթուղու կայարանը, իր սեփական տանից, Օրբէլեան փողոց, № 3:

1—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս է դրութիւնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը. Պատկառովայի ներկայացումները. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Լաւրից. Նամակ Ուրաղութեան. Նամակ Ուրաղութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՆՈՒԹԻՒՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համակերպ գործ եւ զարմանալի գործիչներ:

ԻՆՉՊԷՍ Է ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեր յայտնած երկիւղը դժբաղդաբար արդարացաւ: Եւ մեր երկրի մի ընդարձակ մասը սարսափելի վնասներ է ստացել այն յանկարծակի ցրտերից, որոնք տեղի ունեցան տաք եղանակներից յետոյ: Փչացել են խաղողի վազեր, մրդաւոր ծառեր, բանջարանոցներ եւ մի քանի բոյսերի ցանքներ:

Այնուհը, ուր ցրտի ազդեցութիւնը թոյլ է եղել եւ բոյսերը դեռ շատ առաջ չէին գնացել, վնասը կարող է դեռ մեղմանալ եւ բոյսերը կարող են վերակազմուիլ, բայց որոշ տեղեր եւ այն էլ ընդարձակ տարածութեան վրա, այլ եւ չեն կարող զբոսովել կրած վնասներից: Այդ տեղերում ցանկալի է, որ գիւղատնտեսները առանց ուշացնելու ձեռնարկեն նոր ցանքերի, նոր բոյսերի մշակութեան: Եւ շատ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՄԱԿՐԵԼԻ ԳՈՐԾ ԵՒ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԳՈՐԾԻՆԵՐ

Սեզանում շատ են համակերպ գործեր, բայց դժբաղդաբար աւելի շատ զարմանալի գործիչներ:

Զարմանալի գործիչները մօտենում են համակերպ գործին եւ յանկարծ տեսար, որ համակերպ գործը մի անհամ բան դարձաւ:

Հաւատում եմ եւ մի եւ նոյն ժամանակ միթիւրում, որ այդ պարոնները գործում են անգիտակցաբար:

Ծանկանում էք փաստեր: Ապրիլի 17-ին Նոր-Նախիջևանի Հայունհաց կնամատար ընկերութեան ընդհանուր ժողովն էր:

Ընկերութիւնը հաստատել է 1882-ին Գեորգ Կաթողիկոսը. նպատակն էր՝ խնամել եւ բաշտալ աղվանց համար ծխական հոգեւոր զբաղոցներ:

Ընկերութեան գործունէութիւնը պէտք էր դադարեցնել:

Ընկերութիւնը ունէր գումար—27 հազար: Մենք ձեռք բերինք մի նոր կանոնադրութիւն եւ առաջարկեցինք վեհափառ Կաթողիկոսի համաձայնութեամբ այդ գումարը յատկացնել նոր ընկերութեան:

Որպէս զի կարողացող հասկանայ մեր առաջարկութեան իմաստը, մենք կանոնադրութիւնը բերում ենք միմյանց խմբագրատան մէջ:

Ինչ բերում ենք մի քանի կտորներ: Նոր-Նախիջևանի Հայունհաց նոր ընկերութեան նպատակն է քաղաքային լուսաւորչական դաստիարակութեան չընթացող նիւթական եւ բարոյական վիճակի բարեօրոշման: Ընկերութիւնը իրաւունք ունի օգնել ամեն տեսակ աղքատին, պահել սաներ զարգացնելու, դաստիարակել որբերին, տարածել ժողովրդի մէջ բարոյական բովանդակութիւն ունեցող գրքեր եւ այլն: Հարկաւոր դէպքերում նա բանում է հիւանդանոցներ, բուժարաններ, հասարակական ծաշարաններ եւ այլն:

Մի համակերպ գործ, այնպէս չէ: Բայց ահա մօտենում են զարմանալի գործիչներ, որոնց պարագլուխներ կանգնած էին ապրիլի 17-ին, ժողովի առաջ՝ առաջ քանիցայն Ջալիֆեան, բ. ի. Արաճապետ եւ ու. ի. Քեհեկեան: Պէտք է ասել, որ այդպիսի մի ընկերութիւն կայ Աստարիանում: Համեմատելով երկու կանոնադրութիւնները եւ կոյրը կարող է տեսնել եւ հասկանալ, որ Նոր-Նախիջևանի գերազանց է:

Աստարիանի ընկերութեան նպատակն է նըպատակ միայն Աստարիանի չընթացող հայերին: Նոր-Նախիջևանի պիտի նպաստէ ամեն մի լուսաւորչական հայի:

Աստարիանի ընկերութեան գումարները, եթէ ընկերութիւնը դադարեցնէ իր գործունէութիւնը, գործադրում են Աստարիանի հայերի համար գոյութիւն ունեցող գործի վրա:

Նոր-Նախիջևանի ընկերութեան գումարների գործադրելը կախված է ընդհանուր ժողովից:

Այսինքն ամեն կողմից գործին անաչառ հաւելով, Նոր-Նախիջևանի ընկերութիւնը աւելի

վարի 1-ը բանել են. կանանց բաժնում 121, տղամարդկանց բաժնում 60 եւ երեխաներ 169 հոգի, ընդամենը 356 հոգի, որոնք ունեցել են 4623 աշխատանքի օր: Միջին թուով կանայք աշխատել են օրեկան 36,3 կօպէկ, տղամարդիկ 15—35 կօպէկ, երեխաները 10 կօպէկ: Բոլոր աշխատողները ստանում են առաւօտեան թէյ եւ հաց ձրի, երեխաները ձրի ճաշ էլ են ստանում Ընկերութեան ճաշարանից, իսկ չափահասները էփան գնով են ճաշ ստանում նոյն տեղից: Աշխատանքի տուճը դեռ բոլորովին նոր հիմնարկութիւն է, ուստի այնտեղ գիտողների թիւը դեռ փոքր է: Վարչութիւնը մի շարք միջոցներ է ձեռք բերել Աշխատանքի տան մէջ պատրաստված իրերը Բազում եւ ուրիշ քաղաքներում ծախելու համար: Աշխատանքի տան ծախան է 5890 ռուբլի, մուտքը 872 ռուբլի 57 կօպէկ: Քանի որ Աշխատանքի տունը նոր հիմնարկութիւն է, —ասում է հաշիւը, —ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ չէ կարելի նրա գործունէութիւնը խիստ ընդարձակութեան նկատարկել: Բայց եւ այնպէս, ի նկատի առնելով այդ արդիւնները, որոնց աղոյշվել է հասնել այդ հիմնարկութեան կարծաւու գոյութեան ընթացքում, կարելի է լրացոյց լինել, որ Աշխատանքի տունը Տունը, չնորհի վարչիների եռանդուն ջանքերի եւ հասարակութեան համակրութեան, քաղաքիս չքաւոր եւ անգործ դասակարգի համար կը հանդիսանայ մի բարեբար հիմնարկութիւն թէ բարոյական կրթական եւ թէ բուն նիւթական տեսակէտից:

(Կը չարունակվի)

ՊԱՍԽԱՆՈՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Տիկին Պասխալովա՝ կիրակի, ապրիլի 21-ին, բնի գուրբ եկաւ Օստրովկոյ նշանաւոր «Փոթորիկ» (Робба) պիեսի մէջ: Պասխալովա կատարում էր Կատարինէի դերը:

Թուսաց գրական զննարարները Դօբրոլիւբով եւ Պիտարեւ տարբեր կերպով են լուսաբանում Կատարինէի տիպը: Առաջինի կարծիքով Կատարինէն ներկայանում է իբրեւ մի լուսաւոր չիւղ խաւարի թագաւորութեան՝ մէջ. Պիտարեւի կարծիքով նա նոյն խաւարի թագաւորութեան տիպերից մէկն է եւ չէ կազմում լուսաւոր գիծ: Մի բան յամենայն դէպս ճիշտ է, որ Կատարինէն չէ հայտնում խաւար թագաւորութեան օրէնքների հետ եւ որոնում է անկեղծ սէր եւ յարաբերութիւններ: Նա թոյլ արարած է եւ չէ պատրաստված ուժեղ մարտունակ համար, այդ պատճառով նա իրան ձգում է ջրի մէջ եւ այդպիսով վերջ տալիս իր հոգեկան տանջանքներին:

Պասխալովա ներկայացրեց մեր առաջ Կատարինէին, իբրեւ մի կնիք, որ իրան գրում է ընկած մի անաւիկ եւ անել բերդի մէջ եւ այդ պատճառով սկսել է տրամադրվել թէ նա պէտք է մեռնի շուտով: Նա յիշում է իր անմեղ կուսական երազները, իր մանկական անխաղախ եւ մաքուր ժպիտները եւ չէ կարողանում հաշտվել այն կեղծիքի եւ բռնակալութեան հետ, որ տիրում է իր ամուսնու եւ սկեսրոյ շրջանում: Պասխալովայի Կատարինէն մի առանձին շնչով ասում է, որ եթէ նա երեխաներ ունենար, գոցէ ամեն մի արտաքին տանջանք մոռանար, բայց զրկված է երեխաներ ունենալու բաղձից: Յուսահատութեան եւ վատութեան մտածմունքների մէջ նա մտաբերում է, որ կայ նրան անկեղծ սիրող մի տղամարդ, Բօրիսը, որ նրա նման տանջվում է մի ուրիշ ընտանիքում: Այդ անեղից սկսվում է զգայականութիւնը: Պասխալովան եւ երջանիկ եւ թշուառ: Նա իր արածի անկեղծ մի հոգի նա անկարող է կեղծել, ուստի փոթորկի սարսափի ազդեցութեան տակ նա ամեն բան պատմում է իր բռնակալներին: Պասխալովա բնական եւ արտածիկ կերպով ներկայացրեց տանջվող կնոջ զգացմունքները, նախադարձութեան զէմ կուսելու իր անգործութիւնը, իր անսահման եւ անուղղիչ յուսահատութիւնը: Պասխալովա թողեց ուժեղ տպաւորութիւն: Նրա ջուր ընկնելը մի բնական հետեւանք էր այն բոլորի, ինչ որ տեղի ունեցաւ նրա հետ: Եւ հանդիսականը սպասում էր այդպիսի մի վախճանի:

Միւս դերակատարներից բաւարար էին տիկին Մարիա՝ սկեսրոյ դերում, Վէյանա՝ Տիկինի դերում եւ Եֆիմովիչ՝ Կուզնեւիչի դերում: Մնացածները թոյլ էին:

Թատրոնը լինել էր:

Սիրող

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻՑ

Ապրիլի 15-ին

«Անիծվի այնպիսի ձմեռը, անիծվի այնպիսի գարունը» —ասել է ինչ անիծք են կարգում չուրաւ գիւղացին եւ երկրագործը: Դեռ երէկ, անցեալ օրն էր, որ պտղատու ծառերը իրանց կատարեալ ծաղկաթիթութեան շրջանում մի բանի օր փչող անձրեւային սառնամանիքների ներթափվեցին եւ աւելի քան երկու երրորդ մասով փչացան, ցրտահար լինելով: Այդ հանգամանքը այնքան էլ չը յուսահատեցրեց երկրագործին, չնորհի մեղմ գարնանային տաք օրերի՝ յոյս ունենալով այգիների խաղողի եւ բուրաստանների առատ պտղի վրա:

Նախիջեւանի ամբողջ գաւառում այս տարի երկրագործական արդիւնաբերութիւնը խոտտանում էր չը տեսնված առատութիւն: Այս տարի խաղողը քաղելով չի վերջանայ —լսվում էր ամեն կողմից: Բայց ահա ապրիլի 12-ի գիշերը հասաւ եւ ընտելեան աւերիչ ձեւերը չորացրեց ամբողջովին այգի, բուրսատան, չերամի տներին համարեա կէսը եւ պտղատու ծառերի զգալի մասը: Կարծաւու անձրեւից եւ փչող ցուրտ քամուց յետոյ բացվեց ապրիլի 13-ի չորագործական առաւօտը. ծագեց արեւը եւ այգիները, բուրսատանները ու թիթենիները թաքմ բողբոջները սկսեցին սեւանալ ու չորանալ: Միջօրէին այգիները նման էին հողեկից առաւջացած արօտատեղի խանձված հետ տարածութեան: Վնասը մեծ է եւ ընդհանուր ոչ միայն Նախիջեւանի գաւառում, այլ եւ Օրդուբաժում, Ագուլիսում...

Շրջակայ եւ Դարալագեպի լեռների վրա առատ ձիւն է իջել, բայց տարաբախտաբար օդը մեղմ եւ հանգարտ չէ: Անցեալ տարվայ կարծաւու եւ ցրտերից կրած վնասները եւ անցած պարտքերը խեղճ գիւղացին յոյս ունէր այս տարի մի կերպ թափել իրանից. բայց այժմ ձեւերը ծալած կորցրել է իր վերջին յոյսը: Նա, բացի ցրտերից, որով իր բնտանիքի կարիքը կիսով չափ հազիւ լրացնէ, երկրագործական մնացած արդիւնաբերութիւնից համարեա ոչինչ չի ստանալ, եթէ չը հաշուեք բամբակը, որ նրա եւ սկսել ցանել եւ որը ջրի սակաւութեան պատճառով այնքան էլ ձեռնադրել է գիւղացու համար, ջրատնով նրա վերջին ոյժը:

Այգիների վնասը վատահ կարելի է հաշվել 90 տոկոս: —Այն այգիները, որոնք կապալում էին տրված, տեղերը յետ վերցրեցին կապալատուների խնդրեցով: Իսկ որոնք վարձել էին այգեպաններ, այգու բերքի 1/4 մասի վարձատրութեամբ (չարեքար), հրաժարվեցին իրանց 3/4 մասից յօգուտ այգեպանների: Իսկ ինչ անէ այն այգետերը եւ գիւղացին, որ իր այգու թէ տէրն է եւ թէ ծառան: «Անիծեալ ձմեռ եւ անիծեալ գարուն» —որ միայն մի օրուտ ունեցաւ, այն էլ ոչխարի եւ եղջիւրաւոր կենդանիների վերաբերմամբ:

Ա. Մելիք Բաբախանեան

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՒԻՑ

Ապրիլի 6-ին

Այս վերջին տաս տարվայ մէջ Ղալաւի այգիները՝ գլխին չեկած փորձանք՝ չեղաւ. մի կողմից ֆիլօքսերային հիւանդութիւնները, միւս կողմից Թերեքի յաճախակի հեղեղումները իբր թէ քիչ էին փչացրել մեր այգիները, այս տարի էլ՝ կարծէք մի վերջին հարուած տալու: Եկաւ անժամանակ ցուրտը. հիմա եթէ ի նկատի ունենանք այն ստոր գնեցը (90 կ.—1 ր.—10 կ. գինին, 50—90 կ. չիրան), որոնցով ծախում էին այս վերջին տարիները մեր գինիները եւ նրանց դանդաղ արտադրութիւնը, —այն ժամանակ հասկանալի է կը լինի զղարցի այգետերի դրութիւնը: Անցեալ տարի մեր խեղճ այգետէրերը սովորականից մի քիչ աւել բերք ստանալով, հասնել աշնանին մի քիչ լոյս էր եկել, հազիւ նրանք մի փոքր թօթափել էին նախորդ տարիներում գրկված պարտքերը, եւ եթէ գոնէ մի երկու տարի եւս լինէր անցեալ տարվայ պէս բերք, գուցէ շատերը բոլորովին ազատվէին պարտքերից, բայց անողոր բաղդը չը թողեց նրանց աչք բանալու եւ նրանց բոլոր յոյսը միանգամից օդը ցնցեց:

Ինչ անէ այսուհետեւ խեղճ այգետէրը, խօսքս, ի հարկէ հարուստների մասին չէ: Այս տարի կը պահէ այգին, բոլոր ծախսերը ինչ որ պէտք է կանէ, բայց կը ստանայ արածի կէսը. ուրեմն կը զրկվի միւս տարի անելիք ծախսի կէսից եւ արդիւնքից, որով նա պէտք է մինչեւ նոր բերք ստանալ պահէր իր ընտանիքը: Պէտք է փոխառութեան գիմէ: սակայն

մեծ դիմէ. մեզնում փոխառութեան ընկերութիւններ չը կան, իսկ մասնաւոր անձինք այս տարվայ արկածը տեսած, եկող տարի ամենեւին չեն տայ պարտք. այս դեռ նրանք, որոնք, ինչպէս ասում են, կարող էին ծայրը ծայրին հասցնել, այսինքն որոնք ամեն տարվայ ստացածով կարողանում են յաջող տարին թէ այգին եւ թէ իրանց տուճը պահել: Իսկ նրանք, որոնք անցեալ տարվայ ստացածը տուել են նախորդ տարիներում արած պարտքերի դիմաց եւ այս տարի նորից պէտք է պարտք վերցնէին եւ պահէին թէ այգին եւ թէ տուճը. այդպիսիները, որոնց թիւը սակայն քիչ չէ, —ինչ աւել, սրանց այժմ ոչ ոք փող չի տալ, եւ ինչպէս, ինչին ապաւինած տան: Այգիներից յոյս չը կայ, էլ ինչից պէտք է ստանայ պարտատէրը իր տուածը. կամ միթէ տալ, որ այգեւոր տէրը պահէ այգին եւ մի քիչ բան եթէ կը ստանայ, նշանով էլ ձմեռը իր գլուխը պահէ, եւ գարնանը գուցէ էլ զայ ուզէ: —Չէ, այսքան բարի հարուստներ դեռ չունենք մենք: Պէտք է ասել, որ Ղալաւի այգիների քննալուծմանը ազդեցութեւն չեն տեսնական քայքայման եւ աղքատութեան մասնաւոր: Դառն աղքատութեան եւ մասնավոր նաեւ հազարաւոր մարդիկ, որոնք համարեա բացառապէս Ղալաւի այգիներում մշակութիւն անելով են ապրում:

Մ. Նանիկեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 20-ին

Իմ ծանօթներից մէկը՝ պ. Մ. Ղ. համակրելով այն մտքին, որ հարկաւոր է հաւաքական ոյժով եւ նուիրատուութեամբ հրատարակել տալ հանգուցեալ Կարա-Մուրզայի երաժշտական հեղինակութիւնները, որը ամենալաւ միջոցն է թէ՛ հանգուցեալի յիշատակը յարգելու: Թէ՛ նրա մատակարար օրերին օգնելու եւ թէ՛ երաժշտական գրականութեան մէջ եւս հայկական լուսնի նուիրելու —իւր ընկերների մի շարքան հաւաքել է քանի եւ ութ ռուբլի: Մի պարսն եւս նուիրաբերել է նոյն նպատակով 3 ռուբլի:

Սրա հետ ներկայացնելով յարգելի խմբագրութեան յիշված 31 ռուբլի, խնդրում եմ յանձնել այդ գումարը բոլոր պատկանելոյն:

Աստ. Երեցեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 19-ին

Կարգալով «Մշակի» № 67-ի մէջ Յ. քահ. Տէր-Պետրոսեանի յօդուածը, տւելով չեմ համարում մի բանի խոսք ասել այդ առիթով:

Տէր-Պետրոսեան քահանան, նուիրելով իր նամակը ս. Նշան եկեղեցու ներքին երեցփոխ պ. Գ. Միքայելեանի եւ նրա նախորդ հանգուցեալ Գ. Շաղինեանի արդիւնաւէտ պաշտօնավարութեան, առաջինին համարում է արժանաւոր յաջող իր նախորդի, իսկ նկարագրելով հանգամանօրէն վերջինիս գործունէութիւնը, բնորոշում է նրան ուղղակի ժամանակի հրաշք, որովհետեւ հանգուցեալ Շաղինեան կարողացել է եկեղեցու տարեկան 12 ր. 11 կ. քնդանութիւնը գուտ արդիւնքը հասցնել իր օրով 560—670 ր. եւ այդպիսով իր պաշտօնավարութեան ինչպէս շրջանում աւելացրել է եկեղեցու 2,000 ռուբլի գրամագլխի վրա 5—6000 ռուբլի:

Տէր-Պետրոսեան քահանան Շաղինեանի գործունէութեան արդիւնաւորութիւնը վերագրում է գլխաւորապէս այն հանգամանքին, որ հանգուցեալը, քահանաների պարտաճանաչութեան սահմանից էլ անցնելով, ամեն օր եղել է եկեղեցու եւ ամեն ինչ կարգադրել է անձամբ: «Դա՛նձանակը ինքն է շրջեցրել, թէ ամբողջ եւ թէ կիսաբախտի փոխարինած մոմը անձամբ է բերել եկեղեցին եւ անձամբ էլ ծախել», եւ այս բոլորը անձամբ կատարելով, կարողացել է անտեսել վերոյիշեալ պատկանելի գումարը:

Յիշելով, միմիայնակն է լսել մեր ժամանակում հայ քահանայի բերանից այդպիսի ներբողներ մի երեցփոխի մասին: Եւ ճշմարիտ, արժէ արձանագրել հանգուցեալ Շաղինեանի եւ անցը, գովել նրա արդիւնաւոր պաշտօնավարութիւնը, եթէ եկեղեցու գումարի աճելը աւել է եկել միմիայն այն երկու աղբիւրներից, որոնց վրա շնչում է Տէր-Պետրոսեան. հանգուցեալ ուրեմն նրա ուղիորդներն Սակայն եւնիպիւղի է, որ յիշատակած երկու աղբիւրներից չէր կարող յիմապատկվել եկեղեցու գումարը եւ կայ մի աւելի կարեւոր եւ ուշադրութեան արժանի հանգամանք, որը Տէր-Պետրոսեան մոռացութեան է տուել, որ անկասկած անհուրթիւն կուսակաւ Շաղինեանի գործունէութեան հետ եւ նպատակած եկեղեցու արդիւնքի յիմապատկվելու:

Այդ այն է, որ ս. Նշան եկեղեցու միաբան քահանաները, անշուշտ հմայված կամ կախարդված հանգուցեալի անձնութիւնը ծառայութեանը, սիրով աջակցել են նրան՝ թէ ներսում եւ թէ դրսում օրինակատարութիւններից ստացված եկեղեցապատկան արդիւնքները հարազատութեամբ տեղ հասցնելու գործում, մի բան, որ

չառ հազուադիւս պէտք է համարել մեր նիւթապաշտ քահանաների մէջ: Միաբանութիւնը դրսից մոմ չէ բերել եկեղեցին իր օգտին ծախելու, օրինակատարութիւններից իւրացրած իր արդիւնք մոմերը չէ յանձնել լուսարարին կամ ժամկոչին վաճառելու: Ի շահ իր գրպանի, կիսաբախտ մոմերով օրինակատարութիւն չէ արել եւ ստացած լուսադիւր բաժանել իր, լուսարարի եւ ժամկոչի մէջ, թաղերի վարձը չէ սեփականացրել, եկեղեցու զանրից զեաւոր կամ շուրջառ չէ կարել տուել, երկար ժամանակ օգտվել եւ ապա ծախել եկեղեցու վրա բարձր գնով, նմանեցանքի կերպով: Ինչպէս եւ արարել եւ ժամկոչի մէջ, թաղերի վարձը չէ իւրացրել եւ ստացրել եկեղեցու եւ այն եւ այլն եւ այլն: Տխուր երեւոյթներ, որոնցից գեղծ չէ նոյն իսկ գաղափարաւան եւ կրթված համարվող քահանան: Այո, հասկանալի է, որ այսպիսի պայմանների մէջ կարող էր հանգուցեալ Շաղինեան հրաշք գործել: Այսպիսի բարեխղճ պարագայներում, անկասկած, պ. Միքայելեանը եւս օրինակելի երեցփոխի յիշատակը վաստակէ: Միմիայնակն է:

Վերջացնելով խօսքս, մեղմանում եմ այն երեցփոխներին, որոնց ժամանակը որոշ սահմանի տակ զրկված լինելով, հնարաւորութիւն չեն ունենում ամեն օր եկեղեցի յաճախել, մի բան, որ գոյութիւն չունի նոյն իսկ ի պաշտօնավարութեանը քահանաների կողմից: Բայց երբ մասնաւոր պաշտօնը ստանձնելու օրից հանդիպում են նրանք միաբանութեան կողմից յիշատակված անվերջ գեղծութիւններին, ահա այսպիսի պարագայներում միանգամայն թուլանում է նրանց եռանդը, հարկադրում է վաղորդ թողնել պաշտօնը՝ խոյս տալով անտեղի յաճախումներից եւ անբաւականութիւններից: Այս բոլոր ցաւալի ճշմարտութիւնները դժբաղդաբար գոյութիւն ունեն մեր եկեղեցիներում, ինչպէս եւ արձանագրել էր մի ոմն «Երեւան» 1900 թ. «Մշակի» 28 №-ում: Երանի, հազար երանի այն երեցփոխներին, որոնց վիճակված է գործել այնպիսի եկեղեցու, ուր գոյութիւն չունեն վերագրեալ կողորոշումները:

Երեցփոխ՝ Առ. Վարդապետեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք իշխանուհի Մարիամ Թուրանեանից 15 ռուբլի, մի խումբ յարգողներից Ա. Երեցեանի միջոցով 31 ռուբլի Միք. Տէր Յարութիւնեանից 2 ռուբլի, որոնք նախկին գումարի հետ անում են 68 ռուբլի:

Երէկ, ապրիլի 22-ին, ռուս բանաստեղծ Ժուկովսկու մահվան յիշատակայ տարեդարձի առիթով, բոլոր ռուսախոսական հաստատութիւնների մէջ կատարվեցին պատարագ եւ հոգեհանգիստ, իսկ այսօր, համաձայն ժողովրդական լուսաւորութեան միմիայն կարգադրութեան, նոյն հաստատութիւնների մէջ տեղի կունենան հանդէսներ՝ նուիրված Ժուկովսկու յիշատակին, որոնց ժամանակ կը կարդացվեն հանգուցեալ բանաստեղծի կենսագրութիւնները, կը բացատրվեն նրա գործունէութիւնը, նշանակութիւնը եւ ընդհանրապէս նրա մատուցած ծառայութիւնները հասարակութեան եւ պետութեան:

Թիֆլիսի քաղաքային դուման իր երէկվայ նիստում ընտրեց ուղարկելի անդամ բժիշկ Կ. Ստեփանեանցին, որ մինչեւ այժմ կատարում էր սահմանադրական տեսչի պաշտօն: Նա առաջադրեց 28 սպիտակ ձայն ընդդէմ 15 սեւի:

Վերջին ժամեակի ռուսաց երկաթուղային գծերի վրա երեւացել են մեծ քանակութեան կեղծ տոմսակներ: Երկաթուղիական գործիչների համաժողովը, որ կազմված էր հազորագրողներից, անհապաճեց իմիջապէս զննել տոմսակները: Երկաթուղիական գործիչները եւ ընդհանրապէս նրա մատուցած ծառայութիւնները հասարակութեան եւ պետութեան:

Հրատարակված են կանոններ, որոնցով թոյլ է տրվում թեմական մոմագործարաններին կից բանալ կարմիր գինու պահեստներ՝ առանց այդ բանի համար պահանջվող պատէնտը ձեռք բերելու:

«Новое Время»-ի Պարիզի թղթակիցը գովաւանքով է խօսում օր. Ա. Բարայեանի երեք «սիրուն, բանաստեղծական reverie»-ների մասին, որոնք ի ցոյց են դրված Պարիզի աստիճանում: Օր. Բարայեանը, որ մի քանի տարի է հոգեբան է նկարչական արուեստին, յայտնի Ա. Կարիէրի աշակերտունին է:

Առաջիկայ մայիս ամսի 31-ին լրանում է ռուսաց համակրելի գործիչներից մէկի, «Востокъ Европы» ամսագիր Մ. Մ. Սաափելսկիի ծննդյան 100-ամեակը:

